

վիշտ հրաւիրեց նրան զանազան և զանազան
իր որդիք համար և այդ պատճառով նա իր գործ-
ունեւորութիւնը փոխադրեց Կովկաս, որտեղ 1870
թիւի մինչև 1883 թիւը զանազան պաշտօններ
վարեց։ Նա նշանակվեց առաջ թիֆլիսի I իգա-
կան գիմնազիայի տեսուչ, յետոյ Կովկասի ու-
սումնաբանական չրջանի նախնական վերատես-
ուչ, և ապա ցէնզուրական կոմիտէի նախա-
գահ։ Այս վերջին պաշտօնը թողնելով 1883-ին,
նա վերադարձաւ Պետերբուրգ, որտեղ ստանձ-
նեց Մարիինսկի ինստիտուտի տեսչի պաշտօնը,
իսկ անցեալ տարի նա նշանակվեց խուլերի և
համբերի դպրոցի վերատեսուչ։

Կովկասեան կառավարչապետը, ցէնզուրական
կանոնադրութեան 154-րդ յօդուածի հիման վրա՝
ուրիշ ամսով դադարեցրեց վրաց ամենօրեայ
«Իվլերիա» լրագրի հրատարակութիւնը։

Մեղ խնդրում են սպագրել հետեւեալ արդա-
րացի նկատողութիւնը։ «Մի քանի լրագրիներ
հաստատ աղբիւրներից հաղորդեցին, որ թիֆլի-
սի առաջնորդը հրամայել է թէ քաղաքի և թէ
թեմի ուսումնարանների վարչութիւններին միա-
նուագ վճարել ուսուցիչներին հասանելի բոլոր
ուսմանները 1895—96 ուսումնական տարվայ հա-
մար։ Սակայն այդ հրամանը թիֆլիսի կոնսիս-
տորիան մինչև օրս չէ ուղարկել գաւառները,
թէև մօտ 10 օր է անցել, ինչ որ այդ կարգադ-
րութիւնը եղել է։ Միթէ այդքան պէտք է սպա-
սել, որ գաւառական աղա-հողաբարձները ա-
մարանոցները ցրվին և խեղճ ուսուցիչները
ստիպված լինեն անդադար հոգաբարձուների ե-
տեից ման գալ, ամբողջ ամառը ենթարկվելով
գրամական նեղութիւններին։»

Կիրակի օր, մայիսի 19-ին, կայացաւ խոհա-
րարական ուսման տան և մէկերորդ դասըն-
թացի ուսանողների հարցաքննութիւնը։
Աւարտեցին 23 ուսանողներ, որոնցից 3 ուսա-
նում էին ձրի։ Ներկայ դասընթացը զանազան-
վում էր նախորդներից նրանով, որ սա տեղ է
երկը ամիս, մինչևեւ առաջ տեղում էր եր-
կու ամիս, կերպարներին տեսնելը աւելաց-
րած են։ Հարցաքննութիւն կատարվեց Հայու-
հեաց բարեգործական ընկերութեան վարչու-
թեան անդամների և մի քանի հիւրերի ներ-
կայութեամբ։

Թիֆլիսի վարժուհիների փոխադարձ օգնու-
թեան ընկերութիւնը իր վերջին նիստում, որ
տեղի ունեցաւ կիրակի, մայիսի 19-ին, երկար
վիճաբանութիւններից յետոյ, որոնցից առաջինը
տարին ևս չարժանակել ընկերութեան բացած
օրինակելի դպրոցը։ Հաշուից երևաց, որ այդ
դպրոցը գրաւել է հասարակութեան համակրու-
թիւնը։

Մեղ հաղորդում են, որ կիրակի օր, մայիսի
19-ին քանի թատրոնում նշանակված հայոց
ներկայացումը յետաձգվեց և կայանալու է այսօր,
մայիսի 21-ին։

Երեւանի մեղ գրում են մայիսի 15-ից. «Կի-
րակի երեկոյեան այստեղ եկաւ մեր թեմի նոր
կառավարիչ Ներսէս եպիսկոպոս խաղաղութեան
Նախկին կառավարիչ Անանիա եպիսկոպոսը ու-
ղեւորվեց Եջմիածին։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՆՆԵՐ

Կ. Պոլսից, Ռուսաց զործակալութեան միջո-
ցով, ստացանք հետեւեալ հեռագիրը. «Մայիսի
16-ին զեպտաները հաւաքվեցին խորհրդակցու-
թեան՝ Զէյթունի դրոճերի դրութիւնը քննելու
համար։ Գետազանները համաձայնութիւն կայաց-
րին առանձին առանձին առաջադրութիւններ
անել Բ. Դրանը՝ Զէյթունում բրիտանացի զայ-
մազում նշանակելու վերաբերմամբ։»

Ռուսաց զործակալութիւնը մեղ հեռագրում է
մայիսի 17-ից, Լոնդոնից։ Հաղորդում են, որ
սուլթանը Լոնդոն ուղարկեց մի յատուկ պաշտո-
նեայ՝ հրաւիրելով անգլո-հայկական ընկերակցու-
թիւնը՝ պատգամաւորներ ուղարկել Կ. Պոլսի։

Անգլիական «Contemporary Review» ամսա-
գրի մայիսի համարում տպագրված է մի անստո-
րագիր յօդուած Հայաստան և պետութիւններ
(Armenia and the powers) վերնագրով։

Բէյութի զործակալութիւնը հաղորդում է, որ
ներկայումս Կ. Պոլսում մեծ մրցում կայ զեւ-
պանների մէջ՝ առեւտրական զանազան արտօնու-
թիւններ ձեռք բերելու տեսակէտից։ Իւրաքան-
չիւր պետութիւն ցանկանում է բացառիկ ար-
տօնութիւններ ունենալու իր արդիւնքների հա-
մար։ Ռուսաստանը և Ամերիկան աշխատում են
զերութիւններ ստեղծել իրանց նաւթի համար,
միւս պետութիւնները բանակցում են ալքոհոլի,
ծխախոտի, և այլ առարկաների մասին։ Թիւր-
քիայի անտեսական կեանքը, իսկապէս, գտնվում
է եւրօպայիների ձեռքում, որոնք և աշխատում
են օրից օր մեծացնել իրանց նուաճումները։

Կ. Պոլսից հեռագրում են «Daily News» լրա-
գրին. «Սըր Ֆիլիպ Կերրի մեկնում է Կ. Պոլսից
նշանաւոր եղաւ նրանով, որ ամերիկական գաղ-
թականութեան անդամները յատկապէս եկել
էին իրանց յարգանքը յայտնելու նրան՝ այն ա-
ջակցութեան համար, որ նա ցոյց տուեց միաօ-
նաբերի պաշտպանութեան գործում»։ Իրանց
զեւպանի պաշտօնակատարին։ Թիւրքաց պաշտո-
նական անձերի բացակայութիւնը աչքի էր ընկ-
նում, բայց մի քանի յոյներ և հայեր ներկայ
էին։ Սըր Ֆիլիպ Կերրին այցելեց հայոց պատ-
րիարքին իր մեկնումից առաջ։

Տիֆլիսի Մերի Հիքսոն յայտնում է պաշտօնա-
պէս անգլիական «Daily News» լրագրում, որ
«Կանանց ընկերութեան» կողմից ուղարկված
փողերը ապահով հասնում են վան, և գործա-
դրում են նպատակայարմար միջոցով, օրիորդ
Կիմբլի միջոցով։ Կարիքը զեւ. չէ լրացած և օգ-
նութեան պահանջը չափ մեծ է։

«Daily News» հաղորդում է, որ Լոնդոնի
«Երեւոյութեան ընկերութիւնը» իր տարեկան
ժողովում, որ կայացաւ մայիսի 7/19-ին, Հերիֆոր-
դի եպիսկոպոսը մի երկար ճառ խօսեց, որի մի
մասը նուիրված էր հայոց հայրին։ Նա ասաց,
որ թէ Բերլինի դաշնագրով և թէ Կիսկարի
պայմանագրով Անգլիան պարտավորվել էր երբեք
չը դադարել աշխատելուց՝ մինչև որ այդ ազգի
տանջանքներին վերջ չը դրվի։ «Մենք պարտա-
ւոր ենք, ասեց նա, գործ դնել բարոյական
ճշուն, և եթէ հարկաւոր լինի, դիմել և այլ
միջոցներ։ Մենք բոլորս էլ յուսով ենք և ա-
զգիները, որ հարստի բրիտանացի պետութիւն-
ների վերջ դրվի այդ ֆանտազիոսութեան
ստատիւնաւորի (ծախահարութիւն)։ Իմ զխա-
ւոր յոյսը եւ զնում ազատ և կրթված անգլիա-
կան ազգի զօրութեան վրա։»

Կ Ի Տ Տ Է

Կրեւէ կղզու իրերի վիճակը դառնում է
օրից օր աւելի ու աւելի լուրջ։ Թիւրքաց վաչ-
աղ երկու շաբաթ պայարել էր իօկաւարիւր։
Սպանված են 18 թիւրք։ Դրամիայում թիւրքերը
կորցրին 10 մարդ։ Աւելի քան 1500 մահաւետա-
կան գիւղացիներ փախան Բեռլին։ Թիւրքական
մի բաժանումը կամօսում չըջապատված է ապս-
տամբներով։ Եթէ ապստամբութիւնը չարժանա-
վի, կը պահանջվեն նոր զօրքեր։ Սկստարի վա-
րէ պետութեամբ հրաման է ստացել գնալու
Կրեւէ՝ նախնադասի պաշտօնով։ Իսկ վերջին
հեռագիրը, մայիսի 16-ից, ցոյց է տալիս՝ որ
կղզին այնպիսի յուզման մէջ է, որ Եւրօպայի
միջամտութիւնը դարձել է անհրաժեշտ։

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

(Երկրորդ թիւի մէջից)

Թէհրան, ապրիլի 22-ին

Ուրբաթ օր, երբ չուկայէն անցնում էի, մի
բարձրաստիճան պարսիկ զինուորական, ալալ-
ված դէմքով, մտնեցաւ ծառայի և փախաւով ա-
սեց.— Էլաւ կը լինի, որ քո տէրը տուն գնացաւ։
Երբ խնդրեցի պատճառը, զգուշութեամբ պա-
տասխանեց.— Կուր եւրօպացի էր, ուստի բա-
րեկամութեամբ խորատում եմ ձեզ, որ անմիջա-
պէս գնաք տուն և ձեր դռները վաղեք, և հե-

ռանալու միջոցին, հազիւ լսելի ձայնով աւելա-
ցրեց.— Ընան թող ձեր ծառան մի քանի օրվայ
ուսեստի պաշար առնէ։ Ինձ այնպէս էր թը-
վում, թէ դա մի պարսկական կատակ էր և ոչ
այլ ինչ, սակայն իմ լրատուի դէմքն այնչափ
վրդոված էր, որ անամայ և մեքենաբար իր խը-
րատին հնազանդեցայ։

Երբ չուկայէն դուրս եկայ, դիտեցի պաշտո-
նականներու և զինուորականներու մի անսովոր
բազմութիւն, որ ձիարշաւ այս կողմ և այն
կողմ աճապարում էին Անշուշտ, ասեցի եւս ինձ,
մի արկած պատահած լինելու է։ Երբ մօտ էի
կայսերական պալատին, լսեցի փողերի ձայնը,
որ աւետում էին նորին վեհափառութեան անց-
քը, և յանկարծ, մեծ արագութեամբ, անցաւ ա-
ռափցս վեցածի կայսերական կառքը, չըջա-
պատեալ սովորական ձիաւորների բազմութեամբ։
Շահի աչքերը փակ էին և դէմքի վրա մի գե-
րեզմանական դեղնութիւն էր տիրում։ Սաղա-
զանն ալ, նրա դիմաց նստած, եռանդով իր
տէքն հովհանարում էր։

Յանկարծ ժողովրդի մէջ տարածվեց մի զրոյց,
թէ Շահը վերադարձ եւ, և կարծես մոգական
զօրութեամբ, մի քանի անխնայութիւն մէջ, բոլոր
խանութիւնները և սրճարանները փակվեցան. մար-
դիկ, ուսեստի պաշարներով բեռնաւորված, ա-
ճապարեցին իրենց տները և շուտով տիրեց ա-
մեն տեղ մի դարմանալի լուսնիւն։ Սակայն
սաղաքում հեռատես նախազգուշութիւնների
չտրոճիւ կեանքի ապահովութեան վստահութիւնը
չուտով վերահաստատվեց և ժողովուրդը դուրս
գալով, օրվայ ծանր դէպքի վրա վիճում էր,
տարածելով ամենատարօրինակ զրոյցներ։ Վե-
ջապէս դիմելով մի բարձրաստիճան պալատա-
կանի, ստացայ հետեւեալ հաւաստի տեղեկու-
թիւնները։

Ուրբաթ օր, եւրօպական մայիսի 1-ին, Շահը
որոշում է Շահ-Աբդուլ-Ազիզ երթալ.— մի ուստա-
տելի, որ մայրաքաղաքի հետ երկաթուղով
կապված է,— և ուր, ամեն ուրբաթ, դիմում է
պարսիկների մի մեծ բազմութիւն։ Ամբողջ մէջ
պատմում են, որ երկու օր առաջ Շահը մի
վատ երազ է տեսել, ուստի սաղաքաւոր աղա-
չում է որ չը գնայ, սակայն վեհապետը կարեւ-
րութիւն չը տալով կը մեկնի։ Հասնելով ուս-
տատեղին, Շահը մտնում է մեղիքով իր միջո-
րեայ աղօթքն անելու, և հակառակ վաղեմի սո-
վորութեան, հրամայում է, որ ժողովուրդը մըզ-
կիթի մէջ մնայ։ Երբ պիտի մտնէր Աբդուլ-Ազի-
զի մատուռը, մի մարդ մտնեւում է, խումբ մը
կանանց ետեւէն։ Սաղաքաւոր աշխատում է նրան
արգելել, բայց Շահը հրամայում է, որ թող
տան։ Օտարականը, ձախ ձեռքին մի աղբա-
ղի վերաբերելով, մտնում է պահում էր երկայն
վերաբերելով տակ, մտնեւում է վեհապետին, որ
հազիւ տեսնում է.— Ե՛նչ է, ինչ եւ ուղում, երբ
մարդաստանը յանկարծ քաշելով մի ասորճանակ,
կրակում է ուղղակի Շահի սրտին։ Սարսափահար
հետերդները չըջապատում են նրան, սակայն
մի քանի վայրկեանէն Նասր-է-Ղազին հոգին
աւանդում է, առանց մի քան իսկ արտասանե-
լու։

Բնականաբար ցաւալի լուրը տարածվեց կայ-
ծակի արագութեամբ. բայց սաղաքում, մտնե-
լով կառքը, ամբողջ ճանապարհին, մինչև քա-
ղաք հասնելը, հովհանարում է իր մեռած վեհա-
պետի դեղնած դէմքը, որպէս զի ժողովուրդը
տեսնելով, կարծէ թէ նա միայն վիրաւորված է,
— մի պետական կեղծիք, որ բարեբաղդաբար,
յաջողում է, որովհետեւ, բացի մի քանի բարձ-
րաստիճաններից, ոչ մի պարսիկ տեղեակ չէր
բուն իրողութեան, մինչև ոչ, հետեւեալ օրը,
երբ մեղիքներում պաշտօնապէս ծանուցվում է,
թէ Նասր-է-Ղազին Շահը ժամադրութեամբ է։

Մինչև այն ատեն սաղաքում առատ ժա-
մանակ կը գտնէ, խոհմ նախազգուշութիւննե-
րով, ամեն անկարգութիւններին առաջն
այնպէս որ վստահութիւնը վերահաստատվելով,
խանութիւնները բացվում են և Թէհրանը նորից
ստանում է իր սովորական կերպարանքը։ Մի ի-
րողութիւն, որ պատիւ է բերում նախարարին,
որովհետեւ ուրիշ ժամանակներում, նոյնանման
դէպքերում, այնպիսի արեւնահեղութիւններ են
տեսել ունեցել, որ մարդիկ օրերով իրենց տնե-
րում բանտարկվում էին և ամեն կողմ տիրում
էր հացի սով։

Սաղաքաւոր պիտի անմիջապէս յօշոտվէր,

եթէ սաղաքում նրան չաղատէր։ Նա հիմա
պալատի մէջ բանտարկված է՝ խիստ հակողու-
թեան տակ։ Այսօր նրան տեսայ։ Մի համարձա-
կախօս, հասարակ մարդ է, որը Թէհրանի մէջ
Հաճի-Մոլլա-Բիդա անունով լաւ ճանաչված է,
իրեն մի փողոցային համաճառ։ Երևում է, որ
վերջերս Պոլսի գնացած է եղել և մահացու առ-
ճանակն ալ այնտեղ առած է եղել։ Զինքն զրոյդ
անձնաւորութեանց նկատմամբ ամեն տեսակ
զրոյցներ կան, բայց այս մասին ուրիշ անդամ
Բ. Ա.

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՑ

ՊԱՐԻՋ, 16 մայիսի։ Մայիսի 14-ին Պարիզը
մի շատ կենդանի պատկեր էր ներկայացնում.
մի քանի հասարակական շինութիւններ և մաս-
նաւոր տներ լուսաւորված էին. փողոցներում
զբօնում էին ժողովրդի խմբեր։ Գաւառներից
ստացված հեռագիրները հաղորդում են, որ
Ֆրանսիոսական նոր ցոյցեր են տեղի ունեցել.
հասարակական շինութիւնները և մասնաւոր տը-
րները դարձաւորված են զբօսայինով ամեն տեղ,
իսկ քաղաքային վարչութիւնները որոշել են
ուղեւորներ ուղարկել Յարին։

ՊԱՐԻՋ, 16 մայիսի։ Մայիսի 14-ին ընդունելով
Ֆորին ուստաց եկեղեցում, ուստաց հաւատար-
մատար պ. Գիւր շնորհալուծիւն յայտնեց նա-
խագահին, որ ինքն անձամբ բարեհաճեց ներկայ
լինել մաղթանքին Ֆոր պատառնանց, որ
ինքն չուզեց բաւականապէս այն հեռադրով, որ
Ֆորից ճանապարհ ընկնելուց առաջ ուղարկեց
կայսրին, որ իրան երջանիկ է համարում հանդի-
սաւոր մաղթանքին անձամբ ներկայ լինելով՝ իր
զգացմունքները յայտնել Ռուսաստանին և կայս-
րին այն օրը, երբ մեծ ժողովրդի և Յարի բոլոր
բարեկամները անձամբ կամ իրանց ներկայացու-
ցիչների միջոցով հաւաքվեցին ներկայ լինելու
թագաւորական հանդէսներին։

ՎԻԵՆՆԱ, 16 մայիսի։ Մայիսի 14-ին ուստաց
դեսպանութեան եկեղեցում գահացողական մաղ-
թանք կատարվեց. ներկայ էին՝ արտաւոր զու-
ծերի մինիստր Գոլովոյսկի, մինիստր-նախագահ
Բադէնի, իտալիայի, Ֆրանսիայի, Անգլիայի և
Սլաւոնիայի դեսպանները, գերմանական դես-
պանութեան քարտուղարը, Նիդերլանդիայի,
Յունաստանի և Բոսնիայի ներկայացուցիչները։

ՆԵԱՊՈԼ, 16 մայիսի։ Մայիսի 14-ին «Զարնի-
ցա» նաւը դարձաւորվեց զբօսայինով։ Այսօր
ուստաց եկեղեցում գահացողական մաղթանք
կատարվեց։

ԲՈՒՆԱՐԵՍ, 16 մայիսի։ Մայիսի 14-ին գահ-
ացողական մաղթանք կատարվեց մինիստրների,
պատգամաւորների ժողովի նախագահի, օտար
դեսպանների և գերմանական ներկայութեամբ
Մաղթանքից յետոյ մինիստրը և գերմանները
շնորհաւորութիւններ մատուցին ուստաց դեսպա-
նին։

ԲԵՂԳՐԱՅ, 16 մայիսի։ Մայիսի 14-ին, թագա-
ւորական առիթով, հանդիսաւոր մաղթանք
կատարվեց մայր եկեղեցում, որին ներկայ էին
թագաւորը, մինիստրները և զինուորական կօ-
ւորտի անդամները։ Բաղադրը դարձաւորված է
զբօսայինով։ Նիւօթիլի ճաշ է տալիս, որին
Ալեքսանդր թագաւորը հրաւիրեց ուստաց միւս-
այի բոլոր անդամներին և մինիստրներին։

ՍՈՖԻԱ, 16 մայիսի։ Մայիսի 14-ին քաղաքը
չեղէ կերպով դարձաւորվեց։ Կառավարական հիմ-
նարկութիւնները և զարկոցները ազատ են դարձ-
նուցնելուց։ Առաւօտեան 10 ժամին մայր եկե-
ղեցում հանդիսաւոր մաղթանք կատարվեց երեք
միաբաղկաները, իշխանուհի, զինուորական
մարմնի, մինիստրների, իշխանութիւնների, քաղ-
մաթի օֆիցերների և բոլորական ու սերբական
ժողովրդի ներկայութեամբ։ Երկարակցութիւն
մաղթվեց Արքայական անուն։ Իշխանուհին շնոր-
հաւորեց Չարիւթի ստանարի մէջ։

ՅԵՏՆԻԷ, 16 մայիսի։ Թագաւորութեան առի-
թով մայր-եկեղեցում գահացողական մաղթանք
կատարվեց իշխանուհի-իննամակաւորուհի, մինիս-
տրների և պետական խորհրդի անդամների ներ-
կայութեամբ։ Հրապարակի վրա ժողովուրդը ու-
րախութիւն էր յայտնում երգերով, պարերով։
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մայիսի։ Այս օրերս եկեղե-
ցիներում Պետերբուրգի ազգաբնակչութեան բա-
ժանվում էր թագաւորութեան առիթով յ. Բօգ-
դանովիչի հրատարակած պատկերը։ Թագաւորը
և կայսրուհին նկարված են թագերով և ձիա-
նիւնքով կանգնած վաղիմիակապա Ատուածա-
մօր հրաշակերտ պատկերի տակ, որ նկարել է
Ղուկաս աւետարանիչը և գտնվում է Մոսկվայի
ժամարում։ Պատկերի հետ հրատարակեց բա-
ցատրում է ժողովրդին Ատուածոյ Թնձալի թագա-
ւորութիւնը։

ՊԱՐԻՋ, 17 մայիսի։ Տուրում գտնված ժամա-
նակ հանրապետութեան նախագահ Ֆոր թագա-
ւոր կայսրին հետեւեալ հեռագիրն ուղարկեց.
«Զերմ կերպով ցանկանում եմ յայտնել Ձեզ
Ֆրանսիայի անկեղծ բարեկամութիւնը անձ-
նական երջանակութիւն Ձեր Մեծութեանը, իսկ
Ռուսաստանին—իմանք և բարօրութիւն և ար-
կանում եմ առ ոտս Նորին Մեծութեան թա-
գաւոր կայսրուհի իմ յարգանքներս, և մի և նոր
ժամանակ խնդրում եմ Ձեզ հաւատալ իմ խո-
րին համակրութեանը միջ»։

